

4572



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«04» 07 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 113 - 24

**Նախաձեռնող՝**

**«ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ**  
ք. Երևան, Լենինգրադյան փողոց, 23/07

**Գործունեությունը՝**

**Ներքին Սասնաշեն բնակավայրի դպրոցի  
կառուցում**  
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 113 - 24

«04» հուլիսի 2024թ.

**Ներքին Սասնաշեն բնակավայրի 3-րդ փողոց 10 հասցեում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**


Նախաձեռնող՝	«ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Ներքի Սասնաշեն բնակավայր

**Ներածական մաս.** «ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ-ն նախատեսում է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ներքի Սասնաշեն բնակավայրի 3-րդ փողոց 10 հասցեում կառուցել նոր դպրոց: Ծրագիրն իրականացվելու է ՀՀ կառավարության « 300 դպրոցների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման» ծրագրի շրջանակներում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 26052015-02-0021, ծածկագիրը՝ 02-074-0003-0021 և Թալին համայնքի ղեկավարի կողմից տրամադրված N 01/տրված՝ 05.01.2024թ./ նախագծման թույլտվությունը:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման: Ֆիզիկատերերաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներատերերաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել 25 մետր և ավելի խորություններում: Դպրոցի տարածքում կան պտղատու ծառեր, տույաներ, բարդիներ, որոնց մեծ մասը պահպանվելու են:

**Նկարագրական մաս.** Նախագծվող դպրոցի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 16000 մ<sup>2</sup>: Դպրոցը նախատեսվում է 10-12-րդ դասարանների համար՝ մինչև 288 աշակերտ: Նախագծվող դպրոցի համալիրը բաղկացած է 4 հիմնական մասնաշենքից (A,B,C,D): «A» ուսումնական մասնաշենքը նախատեսված է տարրական դպրոցի (1-4 դասարաններ) աշակերտների համար: Այն երկհարկանի է, ունի նկուղային հարկ: Հարկերի բարձրությունը 3,30 մետր: 1-4-րդ դասարանի աշակերտների համար նախատեսված է





առանձին մուտք գլխավոր ճակատի կողմից, ինչպես նաև էվակուացիոն ելքեր մասնաշենքի կողային ճակատի առաջին և նկուղային հարկերից: Առաջին հարկում գտնվում են նախասրահը, հանդերձարանը, պահակակետը, 1-ին դասարանցիների դասասենյակը, ննջարան-խաղասենյակը, սանհանգույցները, 2-4-րդ դասարանների դասասենյակները, շախմատի սենյակը, ուսուցչանոցը, գրադարանն ու ընթերցասրահը: «B» մասնաշենքը, որը համարվում է կենտրոնական մասնաշենք՝ եռահարկ է: Այստեղից կազմակերպված է միջնակարգ դպրոցի գլխավոր մուտքը: 1-ին հարկում գտնվում են ընդարձակ նախասրահը, դեպի դպրոցի բակ տանող ելքով, 1-4 դասարանների աշակերտների ճաշասրահը՝ սպասարկող խոհանոցային և պահեստային սենյակներով: Երկրորդ հարկում գտնվում են ընդունարանը, տնօրենի, հաշվապահի կաբինետները, բժշկի սենյակը և այլ վարչական սենյակներ: Երրորդ հարկում գտնվում է հանդիսությունների դահլիճն՝ իր բեմով և օժանդակ մասերով: Հարկի բարձրությունն այստեղ կազմում է 4,60 մետր: «C» ուսումնական մասնաշենք նախատեսված է 5-12-րդ դասարանների աշակերտների համար: Այն եռահարկ է, ունի երկու աստիճանավանդակներ և վերելակ: Մուտքը նախատեսված է կենտրոնական մասնաշենքից, ունի էվակուացիոն ելքեր կողային ճակատի առաջին և նկուղային հարկերից: Առաջին հարկում գտնվում են հանդերձարանը, ոստիկանի սենյակը, աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության կաբինետները իրենց լաբորատորիաներով, արհեստանոցը: Երկրորդ հարկում գտնվում են 5-8-րդ դասարանները, գրադարանը, ՆՁՊ-ի սենյակը՝ զինապահեստով: Երրորդ հարկում գտնվում են 9-12-րդ դասարանները, համակարգչային, օտար լեզուների և տեխնոլոգիա սենյակները: Յուրաքանչյուր հարկում կան սանհանգույցներ՝ տղաների, աղջիկների, անձնակազմի և հաշմանդամություն ունեցող անձանց համար: «D» մասնաշենքի մարզադահլիճի մուտքը կազմակերպված է «C» մասնաշենքից: Այն մեկ հարկանի է, հատակագծում ուղղանկյունաձև: Բարձրությունը 7,00 մետր է: Նախագծվող մասնաշենքերը հանդիսանում են առանձին կառույցներ և բաժանվում միմյանցից հակասեյսմիկ կարաններով, ապահովելով ֆունկցիոնալ կապը բոլոր հարկերի մակարդակներով: Դպրոցի մասնաշենքերի կոնստրուկտիվ համակարգը նախատեսված է երկաթ-բետոնե հիմնակմախքով: Պարփակող պատերը և միջնորմները նախատեսվում է իրականացնել պեմզաբլոկե ամրանավորված շարվածքով: Արտաքին պատերի ջերմամեկուսացում իրանացվելու է հանքաքամաբակե կոշտ սալերով, իսկ երեսպատում՝ քարե սալիկներով: Տանիքները լանջավոր են, իրականացված մետաղական կոնստրուկցիաներով, կազմակերպված արտաքին ջրահեռացումով: Էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական լուծումները նախագծվել են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 426-Ն որոշման դրույթների համաձայն: Նախատեսվում է արևային ջրատաքացուցիչի տեղակայում դպրոցի «B» բլոկի տանիքին՝ լրացուցիչ հենակառուցվածքի օգնությամբ, որը միանալու է խոհանոցի ջրամատակարարման ցանցին: Դպրոցի նախագծում հաշվի են առնված հրդեհային ազդարարման և տեսահսկման մասեր, ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխությանն համակարգերի ինժեներական լուծումները՝ տրամադրված տեխնիկական պայմանների և ՀՀ շինարարական կոդերի: Շահագործման փուլում դպրոցն ապահովված է լինելու հաշմանդամների և ընկերության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար կառուցվելու են համապատասխան





սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ, վերելակ, ինչպես նաև հաշմադամություն ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցներ:

Նախատեսվող դպրոցի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 16000 մ<sup>2</sup>:
- դպրոցի կառուցապատման մակերես՝ 2500 մ<sup>2</sup>:
- կանաչապատման մակերես՝ 9120 մ<sup>2</sup>:
- սավաճքներ և անջրանցիկ մակերես՝ 4380մ<sup>2</sup>:
- դասասենյակներ՝ 12 հատ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական արտադրական ձեռնարկություններից:

Շինարարության ընթացքում իրականացվելու 12150 մ<sup>3</sup> ծավալի հողային աշխատանքներ, որից 300 մ<sup>3</sup> օգտագործվելու է հետլիցքի համար: Օգտագործվելու է բերովի գրունտ՝ 300 մ<sup>3</sup> (Թալինի համայնքապետարանի համաձայնությամբ): Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է նաև ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ՝ շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ 7476,90 մ<sup>3</sup> ծավալով՝ ներառյալ քանդման ժամանակ առաջացած շինաղբը, կոշտ կենցաղային թափոններ՝ աղբ կառուցապատման փուլում՝ 5400 կգ/տարի, շահագործման փուլում՝ 144000 կգ/տարի: Առաջացած թափոնները կտեղափոխվեն աղբահավաք ծառայության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Նոր դպրոցի կառուցման ավարտից հետո կքանդվի հին դպրոցի շենքը, որից հետո կիրականացվի բարեկարգման աշխատանքները:

Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինանրարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգ իրականացման գործողություններ՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

#### **Պարճառաքանական մաս.**

Դպրոցի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում: Բարեկարգման և կանաչապատ աշխատանքների իրականացման ժամանանակ կիրականացվի սալարկում՝ 4380 մ<sup>2</sup> տարածքում և կստեղծվի 9120 մ<sup>2</sup> մակերեսով կանաչ գոտի: Տնկվելու են 72 նոր ծառեր՝ 60 տույա և 12 եղևնի, կիրականացվի սիզամարզի ցանքս: Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ներքին ցանցի միջոցով, որը կմիացվի ընհանուր ոռոգման համակարգին:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,





- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Դպրոցի կառուցման ընթացքում, շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ, նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO<sub>x</sub>) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կաչողականությունն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

**Եզրափակիչ մաս.** Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկումներում իրականացվել են Ներքին Սասնաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, անցկացված հանրային քննարկումներում բարձրացված հարցերի պարզաբանումները ներառվել են լրամշակված հայտի մեջ: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ, կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:





### Փորձաքննական պահանջներ

1. Դպրոցի շինարարության և շահագործման ընթացում պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մայիսի թիվ 12-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
2. Դպրոցի շինարարության ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
3. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել Թալին համայնքապետարանի հետ համաձայնեցված նախագծին համապատասխան:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Թալին համայնքի հետ համաձայնեցված:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՎԱՆԳԱՐԴ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ներքի Սասնաշեն բնակավայրի 3-րդ փողոց 10 հասցեում դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի տեղակալ

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
առաջին կարգի մասնագետ

Սուսաննա Անջոնյան